





ՕՐԻԱՅ ԹԵՄԱ

ՌԴ ԱԳՆ.

# «Արեւմուտքի դիրքորոշման պատճառով ՄԱԿ-ի ԱԽ-ն չկարողացավ համարժեք արձագանգել Իրանի հիւլապտոսութեան վրայ յարձակմանը»



Վրտանգութեան խորհուրդը չկարողացաւ համարժեք արձագանգել Իրանի հիւլապտոսական ներկայացուցչութեան վրայ յարձակմանը:

Մենք մեր խորին մտահոգութիւնն ենք յայտնում տարածաշրջանում հերթական վտանգաւոր եսկալացիայի կապակցութեամբ: Բազմիցս զգուշացրել ենք, որ Մերձավոր Արեւելքում, առաջին հերթին, պաղեստինա-իսրայէլական հակամարտութեան գոտում բազմաթիւ ճգնաժամերի չլուծւած լինելը, որոնք յաճախ սնուցում են անպատասխանատու սադրիչ գործողութիւններով, կը հանգեցնեն յարաձուլութեան աճի:

Բոլոր ներգրաւած կողմերին կոչ ենք անում զսպառնալից ցուցաբերել: Յուսով ենք, որ տարածաշրջանի երկրները կը լուծեն առկա խնդիրները քաղաքական եւ դիւանագիտական ճանապարհով: Մենք կարծում ենք, որ կարելի է, որ կառուցողական տրամադրւած միջազգային խաղացողները նպաստեն դրան»:

«ԱԼԻՔ» - Ռուսաստանի ԱԳ նախարարութիւնը յայտարարութիւն է տարածել նախօրէին Իսրայէլի վրայ Իրանի յարձակման կապակցութեամբ: Հարորդում է «ՌԻԱ Նովոստի»-ն:

Յայտարարութեան մէջ մասնատրապէս ասուած է. «Ապրիլի 14-ի գիշերը մեծ քանակութեամբ հրթիռներ եւ անօդայու սարքեր են արձակուել Իսրայէլի ուղղութեամբ: Իրանի ԱԳՆ-ի հարորդումներ այս յարձակումն իրականացել է ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի համաձայն ինքնապաշտպանութեան իրաւունքի շրջանակում՝ ի պատասխան տարածաշրջանում իրանական օբիեկտների վրայ, այդ թուում՝ ապրիլի 1-ին Ղանակոտում Իրանի դեսպանատան հիւլապտոսական բաժանմունքի վրայ յարձակմանը, ինչը մեր երկիրը խտորէն դատաւարտել է:


Յաւօք, արեւմտեան անդամների դիրքորոշման պատճառով ՄԱԿ-ի ԱԽ-

Չախարովան՝ Իսրայէլի դեսպանին.

## «Միմո՛նա, յիշեցրէք ինձ՝ Ե՞րբ է Իսրայէլը դատաւարտել Կիեւի ռեժիմի առնւազն մէկ հարւած ռուսական մարզերին»

Ռուսաստանի ԱԳ նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Չախարովան, ի պատասխան Իսրայէլի դեսպանի՝ Իրանի հարւածը դատաւարտելու կոչին, նշել է, որ Իսրայէլը երբեւէ չի դատաւարտել Ուկրաինայի հարւածները Ռուսաստանի Ղաշնութեան տարածքում:

«Միմո՛նա, յիշեցրէք ինձ՝ Ե՞րբ է Իսրայէլը դատաւարտել Կիեւի ռեժիմի առնւազն մէկ հարւած ռուսական մարզերին: Չէ՞ք յիշում, ես եւս: Բայց ես յիշում եմ իսրայէլցի պաշտօնեաների պարբերաբար յայտարարութիւնները՝ ի պաշտպանութիւն Չելենսկու գործողութիւնների»,-



թելեգրամեան իր ալիքում գրել է Չախարովան: Յիշեցնեք, որ աւելի վաղ լրատուամիջոցները գրել էին, որ ՌԴ-ում Իսրայէլի դեսպան Միմոնա Գալպե-

րինը ասել է, որ Իսրայէլն ակնկալում է Ռուսաստանի կողմից Իրանի զանգւածային հրթիռային յարձակման դատաւարտում:

Tert.am

## Անթիլիասում քննարկելու են Ադրբեջանի գործադրած ցեղասպան արարքները եւ Արցախի ժողովրդի իրաւունքների վերականգնման խնդիրները



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա Վեհափառ Հայրապետին տնօրինումով, «Կիլիկիա վերլուծական հարթակ»-ի աշխատանքներու շրջագիծին մէջ, 20-22 ապրիլի 2024-ին Անթիլիասի Մայրավանքին մէջ տեղի պիտի ունենայ համագումար «Արցախի իրաւունքներու վերականգնումի հրամայականը՝ ընդդէմ Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականութեան» ընդհանուր խորագրին ներքոյ:

կումներուն մասնակցելու համար Անթիլիաս հրաւիրուած է նաեւ Հայաստանի Հանրապետութեան արտաքին գործոց նախկին նախարար Վարդան Օսկանեանը, որ հայկական կողմէն երկար ատեն վարած է արցախեան հակամարտութեան բանակցութիւնները եւ այժմ կը գլխաւորէ Արցախի հարցի հետապնդման համար Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովին կողմէ կազմուած յանձնախումբին աշխատանքները: Նիստերուն ներկայ պիտի ըլլայ նաեւ նոյն յանձնախումբի անդամ եւ Ընկերվար Միջազգայնականի փոխ նախագահ Մարիո Նալբանդեան, որ պիտի ուղեկցի Լուի Սօրէնիօ Օքամիօնի:

Այս առիթով Հայաստանի Հանրապետութենէն, Արցախէն եւ սփիռքեան տարբեր երկրներէ հրաւիրուած են 30 պատմաբաններ, միջազգային իրաւունքի մասնագէտներ եւ քաղաքագետներ:

Լուի Սօրէնիօ Օքամիօն Լիբանանի մէջ գործող դիւանագիտական ներկայացուցիչներու եւ հրաւիրեալներու յարանիստ պիտի դասախօսէ Ցեղասպանութեան ուխտի կիրառելիութեան դժարութիւններուն եւ այդ հրամայականին առջեւ ցցող խոչընդոտներու պատճառներուն մասին: Ան նաեւ իր մասնակցութիւնը պիտի բերէ համագումարի աշխատանքներուն:

Համագումարի թուական նկատի առնուած է Ապրիլը՝ շեշտելու համար Ցեղասպանութեան անպատժելիութեան իբրեւ հետեւանք շարունակող ցեղասպանութիւններու համամարդկային սպառնալիքը եւ Թուրքիոյ աջակցութեամբ Ադրբեջանի իրականացուցած ցեղասպանական գործողութիւնները՝ Արցախի մէջ:

Երեք օրերու վրայ երկարող համագումարէն պիտի բխի յայտարարութիւն ուղեւնչելու համար Արցախի մէջ գործադրուած ցեղասպանութեան հետեւանքներու յաղթահարման եւ Արցախի ժողովրդի իրաւունքներու վերականգնման հնարաւոր ուղիները:

Armenianorthodoxchurch.org

Վահէ Դաւթեան.

## «Արդեօ՞ք Բաքուն կօգտուի Մերձավոր Արեւելքում սրացումից՝ ստանալու այսպէս կոչուած «Չանգեզուրի միջանցք»-ը»



նալու այսպէս կոչուած «Չանգեզուրի միջանցք»-ը:

Առաջին հայեացքից դա միանգամայն հնարաւոր է:

Ընդ որում, երկու կարեւոր հանգամանք համընկնում են.

- 1. Իրանը, որպէս «միջանցքային ռազմավարութիւն» զգալի դերակատար, այժմ ընկղմուած է Իսրայէլի ուղղութեան մէջ:
2. Երեւանում, քաղաքական ներքաղաքական ելներով, ամէն պայման առկայ է յաջող ռազմավարական զիջումների գնալու համար:

քարի բաղկացուցիչ մասն է: Իրանի թուլացումը հիւսիսային ուղղութեամբ լուրջ փոփոխութիւնների կը յանգեցնի Հարաւային Կովկասում՝ այստեղ իսրայէլական գործնի ակտիւացման հնարաւորութեամբ:

Չմոռանանք 2021-2022 թթ. Թեւրահից հնչող յայտարարութիւնները՝ Ադրբեջանում սիոնիստական ռեժիմի ներկայութեան մասին:

Այսպէս թէ այնպէս, Մերձավոր Արեւելքում տեղի ունեցող իրադարձութիւնները միշտ անդրադառնում են Հարաւային Կովկասի վրայ:

Սա է աշխարհաքաղաքական օրգանիկան»:

Քաղաքական գիտութիւնների դրկտոր, պրոֆէսոր, Էներգետիկ անվրտանգութեան փորձագետ Վահէ Դաւթեանը տելեգրամեան իր ալիքում գրում է: «Արդեօ՞ք Բաքուն կօգտուի Մերձավոր Արեւելքում սրացումից ստա-

Սիրիայի ԱԳՆ.

## «Իրանի հարւաճներն Իսրայէլին հասցել են ինքնապաշտպանութեան իրաւունքի շրջանակներում»

«ԱԼԻՔ» - Իրանի հարւաճները Իսրայէլին հասցել են ինքնապաշտպանութեան իրաւունքի շրջանակներում: Այս մասին ըստ Սիրիայի SANA պետական լրատուական գործակալութեան յայտնել է երկրի ԱԳ նախարարութիւնը:



«Իրանի հարւաճներն իսրայէլական ռազմական օբիեկտներին տեղի են ունեցել Իրանի կողմից ինքնապաշտպանութեան իրաւունքի իրականացման շրջանակներում եւ ՄԱԿ-ի կանոնադրութեան 51-րդ յօդուածի

համաձայն», - ասուած է Սիրիայի ԱԳՆ տարածած յայտարարութեան մէջ:









ՀՈԳԵՆԱՆՔԻՍ

Խոր վշտով համակամ յայտնում ենք մեր շար սիրելի եւ թանկագին՝



ՀՐԱՅՐ ԱԼԼԱՅԿԵՐՂԵԱՆԻ

ցաւալի մահուան առաջին փարեւիցի առթիւ՝ չորեքշաբթի, ապրիլի 17-ին, ժամը 14:00-ին՝ Երևանի Մ. Խաչ եկեղեցում (Երմիլարա պող.) կը կատարուի՝

ՀՈԳԵՆԱՆՔԻՍ

Յաւակցութիւնները՝ եկեղեցում եւ հանգուցեալի բնակարանում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Արեւիկ Ռոսպոմեան՝ այրին:

Լինեպ, Առլեպ եւ Անի Ալլահվերդեաններ՝ դուստրերը:

Լոյս եւ Նմայեակ Խողաբախշեաններ՝ քոյրը՝ ընտանեօր:

Յասմիկ Գրիգորեան՝ քոյրը՝ ընտանեօր:

Յարութ եւ Արփիկ Բաղդասարեաններ՝ եղբայրը՝ ընտանեօր:

Մարսէլ եւ Արմէն Մինասեաններ՝ քոյրը՝ ընտանեօր:

Ալլահվերդեան, Ռոսպոմեան, Խողաբախշեան, Խողաբախշեան, Մարգարեան, Բաղդասարեան, Վահրամեան եւ Մանսուրեան ընտանիքներ՝ հարազատները:

ԱԳԻ ԱՍՏԻԿԱԿԱՆ

Նախագահի Կազմակերպչական (Պրոյեկտ) Պրոյեկտ

Table with 2 columns: Service/Category and Location/Address. Includes items like 'Մեքենա քար', 'Ջրամատակարար', etc.

Hyundai.iso243@gmail.com: ԱԳԻ ԱՍՏԻԿԱԿԱՆ
• 021-88608727-8 - Գրասենյակ:
• 09352279296 - Գրասենյակ:

Computer AGMA advertisement with logo, contact info, and services like 'Կազմակերպչական ընկերություն'.

Ararat Organization 2020 advertisement. Features a map of Armenia and text about the '1915 ՅԱՅՐԵԱՆ' event. Includes contact info: www.ararat.org, Ararat\_organization, Telegram.me/Araratorg.

ALIK ARMENIAN DAILY advertisement. Contact info: Tehran 15588339 11, Iran. P.O. Box: 11365-953. Tel: (0098-21) 88768567-8876 1154.

Advertisement for a washing machine. Text: ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ ԼԻԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼԻԱՑՈՂ ՄԵԵՆԱԿԵՐԻ ԼՈՐԻՈՂՈՄ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

Advertisement for clothing. Text: سرمایه گذار جهت تولید ماشین های لباسشویی صنعتی

ALIK-online advertisement. Text: Internet-ային էջն է www.alikonline.ir

AGHI ASTIKHAN advertisement. Table listing services like 'Մեքենա քար', 'Ջրամատակարար', 'Հաշվարկ'.

AGHI ASTIKHAN advertisement. Text: Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հիւ թղթերը յանձնել

DIDAR SEIR-E-GITY advertisement. Text: DIDAR SEIR-E-GITY Միջազգային Ուղեւորափոխադրումների 27 տարայ փորձով այն պատրաստ է սպասարկել Ձեր հարեւարակիցներին

SAFAR DOUSTAN GHARN advertisement. Text: SAFAR DOUSTAN GHARN TOUR & TRAVEL AGENCY. Երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը, իսկ սկսած ապրիլի 16-ից (28 ֆորդին) շաբաթ եւ երեքշաբթի օրերը յաւելեալ թռիչքներ եւ կատարուելու «Ասեման» աւիաընկերութեան միջոցով

